ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 48, հեռ.՝ (+374 10) 59-20-20,
էլ. փոստ՝ info@armbusinessbank.am
ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am

Հաշվետվություն թիվ 3, 09 սեպտեմբերի, 2020թ.

Սույնով տեղեկացնում ենք, որ համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի 08 սեպտեմբերի 2020թ. որոշման «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ նախատեսում է 2020 թվականի սեպտեմբերի 17-ին իրականացնել AMARBBB25ER7 տարբերակիչ ծածկագրով պարտատոմսերի հետգնում:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Աշխատակազմի ղեկավար՝ Մարի Ստեփանյան

Հավելված 1

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

AMARBBB25ER7 տարբերակիչ ծածկագրով պարտատոմսերի հետգնման իրականացման նկարագիր

Սույն առաջարկով Հայբիզնեսբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) իր կողմից թողարկված AMARBBB25ER7 տարբերակիչ ծածկագրով պարտատոմսերի սեփականատերերին առաջարկում է մասնակցել նշված պարտատոմսերի հետգնմանը: Հետգնումն իրականացվելու է 2020 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 10:00-ից 15:30-ն ընկած ժամանակահատվածում: Հետգնումն իրականացվելու է տարեկան 8.00% եկամտաբերությամբ, որին համապատասխան մեկ պարտատոմսի գինը 2020 թվականի սեպտեմբերի 17-ին կկազմի 100.9062 ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի գինը հաշվարկվել է ստորև ներկայացված բանաձևով՝

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\left(\frac{1}{(1+\frac{y}{100*f})^{i-1+t}}\right) + \left(\frac{100}{(1+\frac{y}{100*f})^{N-1+t}}\right)$$

$$t = \frac{DSN}{DCC}$$

DP – պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա մեջ եղած օրերի քանակն է՝ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման օրերի քանակն է՝ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում),

N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է,

y – մինչև մարում եկամտաբերությունն է,

C – տարեկան արժեկտրոնն է 100 միավոր անվանական արժեքի դիմաց:

Հետգնմանը մասնակցելու համար սեփականատերերը պետք է լրացնեն և սույն առաջարկով սահմանված հետգնման ժամանակահատվածում (2020 թվականի սեպտեմբերի 17, ժամը 10:00-ից 15:30-ն, այլ ժամանակահատվածում ներկայացված հայտերը համարվելու են անվավեր և չեն դիտարկվելու) պատշաճ կարգով Բանկ ներկայացնեն սույն առաջարկի հավելված 1.1-ով կամ հավելված 1.2-ով ներկայացված հետգնման հայտ-հանձնարարականը: Հետգնման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կարգով ներկայացված, եթե այն ներկայացվել է սեփականատիրոջ կողմից (լիազորված անձի կողմից ներկայացվելու դեպքում կից պետք է ներկայացնել լիազորագիր) Հայբիզնեսբանկ ՓԲԸ Ներդրումային գործառնությունների վարչությանը (Գլխամասային գրասենյակ՝ Նալբանդյան 48, ք. Երևան 0010, ՀՀ, հեռ.՝ +374 10 592031, լիազորված աշխատակից՝ Արուսյակ Ռուբենյան)՝ թղթային եղանակով ստորագրված լիազորված անձի կողմից և կնքված (կնիքի առկայության դեպքում): Հետգնման հայտ-հանձնարարականը Բանկ ներկայացնելով՝ սեփականատերը հաստատում է պարտատոմսերի հետգնման առաջարկի պայմաններն ընդունելու իր պատրաստակամությունը, և այդ պայմանները սեփականատիրոջ համար դառնում են պարտադիր:

Պարտատոմսերի հետգնման հայտ-հանձնարարականը պատշաճ կարգով Բանկ ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պարտատոմսերը հետ վաճառել ցանկացող սեփականատերը պետք է Բանկի թողարկողի դեպո հաշվեհամարին (7115400000013) փոխանցի հետգնման հայտ-հանձնարարականում նշված քանակի AMARBBB25ER7 տարբերակիչ ծածկագրով պարտատոմսեր, իսկ սահմանված ժամկետում և կարգով համապատասխան փոխանցում չիրականացվելու դեպքում տվյալ հետգնման հայտ-հանձնարարականը համարվում է անվավեր: Պարտատոմսերի փոխանցում կատարելու համար սեփականատերը պետք է իրեն սպասարկող հաշվի օպերատորին ներկայացնի

պարտատոմսերի փոխանցման հանձնարարական՝ համաձայն տվյալ հաշվի օպերատորի սպասարկման կանոնների:

Բանկը, համաձայն Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների, ծրագրային համակարգ է մուտքագրում պարտատոմսերի՝ թողարկողի դեպո հաշվեհամարին ստացման հանձնարարական: Հանձնարարականների համընկնման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված ժամկետում պարտատոմսերը ստացվում են Բանկի թողարկողի դեպո հաշեհամարին:

Թողարկողի դեպո հաշվեհամարին պարտատոմսերի ստացումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Բանկը սեփականատիրոջ՝ հետգնման հայտ-հանձնարարականում նշված հաշվեհամարին է փոխանցում պարտատոմսերի հետգնման գումարը:

Հետգնված պարտատոմսերի դիմաց վճարվող ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով և կլորացվում ստորակետից հետո երկու նիշ ճշտությամբ՝

ՎԸԳ= Գ*Ք,

որտեղ՝

ՎԸԳ- վճարվող ընդհանուր գումար,

Գ- սույն առաջարկով սահմանված գին,

Ք- ներդրողի կողմից հետ վաճառվող (հետգնման հայտ-հանձնարարականում նշված) քանակ:

Պարտատոմսերի հետգնմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հետգնման հայտ-հանձնարարականներ:

Սեփականատերերը պարտավոր են հոգալ պարտատոմսերի՝ Բանկի թողարկողի դեպո հաշվեհամարին փոխանցման հետ կապված ծախսերը: Այն սեփականատերերի համար, որոնց դեպո հաշվեհամարները վարվում են Բանկի միջնորդությամբ, սույն հետգնմանը մասնակցության արդյունքում պարտատոմսերի փոխանցման միջնորդավճարը սահմանված է Կենտրոնական դեպոզիտարիայի տվյալ պահին գործող սակագնի չափով:

Հետ վաճառված պարտատոմսերի դիմաց վճարված գումարի կանխիկացման սակագինը սահմանված է 0% այն սեփականատերերի համար, որոնց ՎԸԳ-ի ստացման հաշվեհամարը վարվում է Բանկում:

Սեփականատերերը պարտատոմսերի հետգնման հայտ-հանձնարարականները պատշաճ կարգով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և պարտատոմսերի փոխանցումը կատարելուց հետո դրանք չեն կարող հետ կանչել:

Պարտատոմսերի հետգնման նվազագույն և առավելագույն մեծությունների վերաբերյալ սահմանափակումներ չկան (սակայն ոչ ավելի, քան սեփականատիրոջ հաշվին առկա քանակը):

Հետգնման հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո սեփականատերերն արժեթղթերի հաշվից քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից:

Սեփականատերերը Բանկի կողմից տեղեկացվում են իրենց հետգնման հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հետգնման հայտ-հանձնարարականների բավարարման մասին սեփականատիրոջը տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով սեփականատերը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի հետգնման հայտ-հանձնարարականը/ները:

Հետգնմանը մասնակցող սեփականատերերի որևէ խմբի նախապատվության իրավունք չի տրվելու:

Բանկը պարտատոմսերի հետգնման արդյունքները հրապարակում է իր ինտերնետային՝ www.armbusinessbank.am կայքում հետգնման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկը պարտատոմսերի հետգնումից հետո՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, համապատասխան հանձնարարական է տալիս Կենտրոնական Դեպոզիտարիային՝ պարտատոմսերի հետգնված ծավալը մարելու վերաբերյալ:

Հավելված 1.1

Հետգնման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած պարտատոմսերի հետգնմանը մասնակցության հայտ-հանձնարարական

Հայտի Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____

(օր, ամիս, տարի, ժամ)

Իրավաբանական անձի անվանումը _____

(ֆիրմայի անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետական գրանցման տվյալները _____

(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման և գտնվելու վայրը _____

(գրանցման և գտնվելու վայրի հասցեները)

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հետգնման առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում հետ վաճառել Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Հետ վաճառվող պարտատոմսերի քանակը՝ հատ ( )

քանակը թվերով (տառերով)

Հետ վաճառվող պարտատոմսերի վաճառքի գինը ( )

գինը թվերով (տառերով)

Հետ վաճառվող պարտատոմսերի վաճառքի դիմաց ստացվող ընդհանուր գումարը ( )

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով
բանկային հաշվի համարը _____
(լրացվում է արտարժութային պարտատոմսերի վաճառքի դեպքում)

Անձի ՀՀ դրամով
բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող
անձի անվանումը _____

Արժեթղթերի հաշվի
համարը _____

Սույնով հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, պարտատոմսերի հետգնման առաջարկի պայմաններին, ստանձնում ենք այդ պարտատոմսերի հետգնմանը մասնակցության հետ կապված հնարավոր ռիսկերը:
Հաստատում ենք, որ պարտատոմսերը, որոնք վաճառվում են Բանկին, ձեռք են բերվել օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:
Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Հետգնվող
պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի
ընդհանուր քանակ՝ հատ ( )
քանակը թվերով (կառերով)

Դրամական միջոցների փոխանցման/

մուտքագրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____
(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Կ.Տ.

Հավելված 1.2

Հետգնման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած պարտատոմսերի հետգնմանը մասնակցության հայտ-հանձնարարական

Հայտի Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____
(օր, ամիս, տարի, ժամ)

Հայտ ներկայացնողի անունը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի տվյալները _____
(Անձնագրի համար, տրման ամսաթիվ)

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Գրանցման հասցեն _____

Սոցիալական քարտի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հետգնման առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում հետ վաճառել Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Հետ վաճառվող պարտատոմսերի քանակը՝ հատ (_____)
քանակը թվերով (տառերով)

Հետ վաճառվող պարտատոմսերի վաճառքի գինը ( )

գինը թվերով (տառերով)

Հետ վաճառվող պարտատոմսերի վաճառքի դիմաց ստացվող ընդհանուր գումարը ( )

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը _____

(լրացվում է արտարժութային պարտատոմսերի վաճառքի դեպքում)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անվանումը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույնով հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, պարտատոմսերի հետգնման առաջարկի պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերի հետգնմանը մասնակցության հետ կապված հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ պարտատոմսերը, որոնք վաճառվում են Բանկին, ձեռք են բերվել օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ:

Տեղեկացված եմ(ենք), որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով (ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից):
Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Հետգնվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ՝ հատ ( )
քանակը թվերով (կառերով)

Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____
(ֆիզիկական անձի տվյալները)

Կ.Տ.